ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

27 օգոստոսիսի 2020թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի անդամները և տնօրենի պաշտոնակատար պ-ն Ա.Մակարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Նոր 20-21 ուս տարվա նախապատրաստական աշխատանքներ

2. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի 2019-20 ուսումնական տարվա դեկանի պաշտոնակատար Մ.Զաքարյանի հաշվետվությունը

3. Ընթացիկ հարցեր:

/զեկ. Մ.Զաքարյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Մ.Զաքարյանը:

1. ԼՍԵՑԻՆ- .Նոր 20-21 ուս տարվա նախապատրաստական աշխատանքներ:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Մ.Զաքարյանը: Նա ներկայացրեց, որ բոլոր կուրսերում մասնագիտական դասախոսությունները և հանրակրթական մասի առարկաների դասերը անցկացվելու են ZOOM-ով, իսկ մասնագիտական գործնական և լաբորատոր դասերը համալսարանում, շաբաթական 12 ժամից ոչ ավել ժամաքանակով, 60 րոպե տևողությամբ և տաս րոպե ընդմիջումով:

Առաջին կուրսում դասավանդվող առարկաներն են

Թիվ	Առարկա	Դաս.	Գործն
1.	Անալիտիկ երկրաչափության և հանրահաշվի տարրերը,	30	30
2.	Մաթեմատիկական անալիզ	45	45
3.	Դիսկրետ մաթեմատիկա	30	30
4.	ԷՀՄ և ծրագրավորում	30	30

II,III,IV կուրսերում սեպտեմբերի 15-ից դասերը անցկացվելու են նույն սկզբունքով:

2-րդ կուրս

Թիվ	Առարկա	Դաս. ZOOM-հարթակում	Գործն. համալսարանում
1.	ԷՀՄ ճարտարապետություն և ասեմբլեր լեզու	30	30
2.	Մաթեմատիկական անալիզ-3	45	45
3.	Տվյալների կառուցվածքներ	30	45
4.	ֆիզիկա	30	30
5.	հանրահաշիվ	30	30
Հանրակրթական մաս –ZOOM հարթակում			
6.	հոգեբանություն	30	
7.	Տրամաբանության հիմունքներ	30	
8.	Մասնագիտական անգլերեն		45
9.	Տնտեսագիտության հիմունքներ	30	

Ֆիզկուլտուրա չի լինելու

3-րդ կուրս

Թիվ	Առարկա	Դաս. ZOOM-	Գործն. Համալսա

		հարթակում	բանում
1.	Մաթ. Մոդելավորում և թվային մեթոդներ Հետազոտական բաղադրիչ	30	30
2.	Կիսահաղորդիչների սարքերի ֆիզիկա	45	30
3.	Համակարգիչների տարր. Հենքի ֆիզիկա	20	40
4.	Դիֆերենցիալ հավասարումներ	45	30
5.	Հավանականությունների տեսություն	45	45
6.	Ֆունկցիոնալ անալիզ	45	

4-րդ կուրս

Թիվ	Առարկա	Դաս. ZOOM-հարթակում	Գործն. Համալսարանում
1.	WEB ծրագրավորում Հետազոտական բաղադրիչ	30	15
2.	Կրիպտոգրաֆիայի մաթեմատիկական մեթոդներ	30	30
3.	Մաթ. Կիբերնետիկայի տարրերը	30	45
4.	Կոմբինատոր ալգորիթմներ	20	40
5.	Մաթ. տրամաբանություն	45	

Քարտեզագրություն և կադաստրային գործ

4-րդ կուրս

Թիվ	Առարկա	Դաս. ZOOM-հարթակում	Գործն. Համալսարանում
1.	Անտառային ռեսուրսների կադաստր և մոնիթորինգ	30	15
2.	Թվային քարտեզագրություն	45	45

3.	Հողային կադաստր	30	
4.	Հողային ռեսուրսների կառավարում	30	45
5.	Քարտեզների ձևավորում և համակար գչային դիզայն	45	30
6.	ATH տեխնոլոգիաների և GPS	40	80

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Դավթյանը ասաց, որ նույն առարկայի դասախոսություն և գործնական դասավանդող դասախոսները պետք է լինեն սերտ կապի մեջ:

ԾՆԻՏ ամբիոնի կողմից այլ ֆակուլտետներում դասավանդվող հանրակրթական մասի տեղեկատվական տեխնոլոգիաներ առարկան անհրաժեշտ է դասավանդել համալսարանում, ուսանողներին ծանոթացնել ZOOM հարթակում դասերի անցկացման սկզբունքներին:

Կրթական ծրագրերի պատասխանատու, աամբիոնի վարիչ Ա.Հովակիմյանը առաջարկեց հանձնարարել դասախոս Ք.Օթարյանին ուսանողներին ծանոթացնել առաջին կուրսի ուղեցույցին, ZOOM հարթակում դասերի անցկացման սկզբունքներին:

Որոշեցին-

Մասնագիտական առարկաների գործնական և լաբորատոր դասերը անցկացնել համալսարանում, երեքշաբթի և շաբաթ օրերին , 6+6 ժամ տևողությամբ:

«Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչ Ա. Հովակիմյանը և «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության » ամբիոնի վարիչ Գ.Սիմոնյանը:

Նրանք ներկայացրեցին 2020-2021 ուս տարվա ժամաբաշխումը:

Ուսումնամեթոդական բաժնի վարիչ Ա.Դավաթյանը ներկայացրեց, որ ուսումնական մասը ստուգում է նորմատիվները, հետևում է մուտքերից կախված դասացուցակը ինչպես է կազմվել:

Առաջարկեց վերհանել խնդիրները, քանի որ սեպտեմբերի 15-ից է հաստատվելու, անհրաժեշտության դեպքում հնարավոր են փոփոխություններ:

Տեղի ունեցավ բուռն քննարկում:

ՈՐՈՇԵՑԻՆ – **Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունները ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն հաստատելու :**

ԼՍԵՑԻՆ -ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի 2019-20 ուսումնական տարվա դեկանի պաշտոնակատար Մ.Զաքարյանի հաշվետվությունը

ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետն իրականացրել է ուսումնական գործընթաց երկու մասնագիտություններով՝ «Ինֆորմատիկա /համակարգչային գիտություն/ Ինֆորմատիկան կիրառական մաթեմատիկա», ,,Աշխարհագրություն,, <<Քարտեզագրություն և կադաստրային գործ>> կրթական ծրագրերով:

Ֆակուլտետի կառուցվածքում կա երկու ամբիոն՝ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների: Ֆակուլտետում գործում է ընդհանուր ֆիզիկայի, և մասնագիտական համակարգչային երկու լաբորատորիաները:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են փոխհամագործակցված աշխատանքներ դեկանատի, ամբիոնների և լաբորատորիաների հետ միասին: Ֆակուլտետի անձնակազմի հիմնական նպատակը որակյալ կրթության ապահովումն է:

1. Մշակվել և իրականացվել են ուսումնական պլանները:
2. Իրականացվել են փոխադարձ դասալսումներ և ակնարկային դասախոսություններ:

Դեկանատը ունի ծրագրային առանձին համակարգ ուսումնական, կարգապահական պրոցեսը վերահսկելու նպատակով:

Ֆակուլտետում 2019-20թթ. ուստարում իրականացվել է հետևյալ ուսումնական գործընթացը, իր գործունեության հիմքում դնելով մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը:

[Երկրում մարտ ամսից սկսած համաճարակը, խաթարեց ուսումնական պրոցեսի նորմալ գործունեությունը: Ինչպես հայաստանյան մյուս ԲՈՒՀ-երն, այնպես էլ մասնաճյուղն ու ֆակուլտետն, անցան հեռավար ուսուցման հնարավոր ձևերին:

Շնորհիվ մասնաճյուղի ղեկավարությանը, հեռավար ուսուցման զանազան ձևերից, արդեն իսկ ապրիլից, մասնաճյուղն անցավ հեռավար ուսուցման միասնակն ձևին՝հեռավար ուսուցում <<zoom.us>> հարթակի միջոցով, մինչ այդ արդեն իսկ գործող դասացուցակների:]

1. Նշված մասնագիտությունների ուսումնական գործընթացի իրականացման համար մշակվել են կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխություններ:

2. Ապահովվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը բոլոր գործընթացներում:
3. Պարբերաբար իրականացվել են հանդիպումներ հասարակայնության հետ և հանրակրթական դպրոցներում՝ կապված ընդունելության ընդլայնման հետ:
4. Իրականացվել են աշխատանքներ դասախոսական կազմի բարելավման ուղղությամբ:
5. Բարելավվել է ուսանողների բավարարվածության մակարդակը, ապահովվել է տեղեկատվական համակարգի մատչելիությունը:
6. Ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի, 2019-20 ուստարում իրականացվել են ուսումնական պլանով նախատեսված ուսումնական պարապմունքները, նախատեսված ժամաքանակներով, կազմակերպվել են ընթացիկ ստուգումներն ու ընթացիկ քննությունները և քննաշրջանը:
7. Կազմակերպվել են ավարտական աշխատանքների պաշտպանությունը:
8. Կազմակերպվել են կուրսային աշխատանքների պաշտպանությունը:
9. Ամենօրյա աշխատանք է իրականացվել ուսանողների կարգապահական, աշխարհայացքի ձևավորման նպատակով:

ԼՍԵՑԻՆ – Ֆակուլտետում 2021-2022 ուս.տարվա համար ընտրել նոր մասնագիտություն:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը ներկայացրեց, որ անհրաժեշտ է Բնագիտական ֆակուլտետում հաջորդ ուսումնական տարվա համար ընտրել, բացել երկրորդ մասնագիտություն, նախապես քննարկել են Ռ.Յոլչյանի, Գ.Գուլակյանի, Ա. Մարգարյանի, Մ.Աթոյանի հետ: Ներկայացրեց նախապես ընտրված մասնագիտությունները և առաջարկեց ընտրել նախընտրելին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մակարյանը ներկայացրեց, որ կառավարությունը 1916թ. Հաստատել է մասնագիտությունների և որակավորումների, կրթական ծրագրերի ցանկ յուրաքանչյուր ոլորտում, հետևաբար ընտրված մասնագիտությունը պետք է կառավարությունը գրանցում ունենա որպես մասնագիտություն, **լից**ենզիա ստանալու

համար համեմատություն է անցկացվում առաջատար որևէ ԲՈՒՀ-ի կրթական ծրագրի հետ:

Որևէ մասնագիտություն ունենալու համար նախ անհրաժեշտ է ապահովել տեխնիկական բազան:

Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ անհրաժեշտ է նախ ընտրել կրթական ծրագիր:

Է.Սարգսյանը առաջարկեց կրթական ծրագրին համապատասխան ճիշտ անվանում ընտրել:

ՈՐՈՇԵՑԻՆ *– Ամբիոններում շարունակել քննարկումը:*

ՆԱԽԱԳԱՀ Մ.Ա.ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ